European Monitoring Centre
for Drugs and Drug Addiction

ԹԹՄԵԿ միտումների հայտնաբերման բրիֆինգի ամփոփում

Սեպտեմբեր 2020թ.

ԿՈՎԻԴ-19-ի ազդեցությունը թմրանյութերի շուկաների, թմրանյութերի օգտագործման, թմրանյութերի հետ կապված վնասների վրա և հակազդման քայլերն Արևելյան եվրոպական հարևանության քաղաքականության

ԿՈՎԻԴ-19 համաճարակի հետ կապված իրավիճակը և դրան հակազդելու քայլերը-շարունակվում են արագորեն ծավալվել: European Centre for Disease Prevention and Control և World Health Organization պարբերաբար տրամադրվում են թարմացումներ և շատ երկրներում առկա են ազգային հանրային առողջության ուղեցույցներ: ԹԹՄԵԿ-ը ստեղծել է COVID-19 resource hub, որտեղ հասանելի են թմրանյութերի և ԿՈՎԻԴ-19-ի հետ կապված հարցերի վերաբերյալ ամենավերջին նյութերը:

2019 թվականից ի վեր՝ ԹԹՄԵԿ-ն ընդլայնել է համագործակցությունը Եվրոպական հարևանության քաղաքականության գործընկերների ([1]) հետ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող the EU4Monitoring Drugs (EU4MD) project ծրագրի շրջանակում: Ծրագիրն աջակցում է ազգային և տարածաշրջանային պատրաստակամությանը՝ հայտնաբերելու թմրանյութերի հետ կապված անվտանգային և առողջապահական վտանգները և արձագանքելու դրանց:

Funded by the European Union

EU4MD

([1]) Ալժիր, Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Եգիպտոս, Վրաստան, Իսրայել, Հորդանան, Լիբանան, Լիբիա, Մոլդովա, Մարոկկո, Պաղեստին *, Թունիս և Ուկրաինա

*Այս նշումը չպետք է ընկալվի որպես Պաղեստինի պետության ճանաչում և չի հակասում այս հարցի վերաբերյալ անդամ պետությունների առանձնահատուկ դիրքորոշմանը:

Ամփոփում

2020 թվականից ի վեր՝ աշխարհն առերեսվում է անօրինակ հանրային առողջապահական արտակարգ իրավիճակի, որի պատճառը կորոնավիրուսային հիվանդության (ԿՈՎԻԴ-19) համաճարակն է, ինչը հանգեցրել է սոցիալական հեռավորության և այլ վերահսկողական միջոցների աստիճանական ներմուծմանն ազգային կառավարությունների կողմից: Ուսումնասիրելու համար համաճարակի ազդեցությունները և ներգործությունը Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) երկրների թմրանյութերի շուկաների, թմրանյութերի ծառայությունների և թմրանյութեր օգտագործող անձանց վրա՝ Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնը (ԹԹՄԵԿ) նախաձեռնեց միտումների հայտնաբերման հետազոտություն: Սույնով ներկայացված է 2020 թվականի մարտ և մայիս ամիսների միջև Արևելյան ԵՀՔ երկրներում ([2]) թմրանյութերի շուկաների, թմրանյութերի ծառայությունների և թմրանյութ օգտագործող անձանց վրա ԿՈՎԻԴ-19-ի ազդեցության մասին հետազոտության արդյունքների ամփոփումը ([3]):

Ինչպե՞ս են փոխվել թմրանյութերի շուկաները

- Հետազոտությունն ենթադրում է, որ ԿՈՎԻԴ-19-ին առնչվող սահմանափակման միջոցների ներմուծումից հետո, թմրամիջոցների շուկաները տարածաշրջանում քիչ կամ չափավոր չափով նվազել են: Տեղի են ունեցել մատակարարման շղթայի խափանումներ՝ հանգեցնելով սահմաններին առգրավումների ծավալի նվազմանը, ինչպես նաև որոշ երկրներում որոշ տիպի թմրանյութերի մանրածախ գների աճին (տե՛ս նկարը):
- Նշաններ կան, որ շուկայի այս խափանումը որոշ երկրներում կարող է հանգեցնել ամֆետամինի փոքրամասշտաբ (տնայնագործ) արտադրության նոր ալիքի:
- Մանրածախ մակարդակում գերակշռել են առանց կոնտակտների թմրանյութերի վաճառքի դեպքերը: Ինչը հավանաբար պայմանավորված է ազգային մակարդակով ներմուծված տեղաշարժվելու սահմանափակումներով, հասարակական կարգի պահպանման միջոցառումների խստացմամբ և անձնական կոնտակների սահմանափակման միջոցով ԿՈՎԻԴ – 19-ը զսպելու ռազմավարությամբ:
- Միևնույն ժամանակ, իրավապահ մարմինների գործունեությունը նույնպես ենթարկվել է տարբեր ազդեցությունների և թմրանյութերի մասին օրենքի խախտումների մասին հաղորդումների նվազումը կարող է պայմանավորված լինել ազգային առաջնահերթությունների ժամանակավոր փոփոխություններով՝ այս ժամանակահատվածում ոստիկանության ուշադրության կենտրոնում էր հանրային անվտանգության և կարգի ապահովումը:

([2]) Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա

([3]) Բրիֆինգն ամբողջությամբ հասանելի է անգլերեն լեզվով այս կայքից՝ www.emcdda.europa.eu

ՆԿԱՐ

Թմրանյութերի գների և մաքրության փոփոխությունները որոշակի երկրներում ԿՈՎԻԴ-19 համաճարակի նախնական ամիսներին

	Գներ				Մաքրություն			
	Հայաստան	Վրաստան	Մոլդովայի Հանրապետություն	Ուկրաինա	Հայաստան	Վրաստան	Մոլդովայի Հանրապետություն	Ուկրաինա
Կանեփ (խեժ, բույս)	↑	↑↑	↑	↑	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ
Հերոին	↑	↑↑	↑↑	↑	Հայտնի չէ	↓	Հայտնի չէ	Հայտնի չէ
Կոկաին	↑	Հայտնի չէ	↑↑	↑↑	Հայտնի չէ		Հայտնի չէ	↓
MDMA/ էքստազի	Հայտնի չէ	↑↑	↑	↑↑		Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ
Ամֆետամին	↑	Հայտնի չէ	↑	↑	Հայտնի չէ		Հայտնի չէ	Հայտնի չէ
Նոր հոգեակտիվ նյութեր	Հայտնի չէ	↑↑	Հայտնի չէ	↑		Հայտնի չէ		Հայտնի չէ
LSD	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ				

↑↑ Զգալի աճ >20% ↑ Քիչ աճ <20% ↓ Նվազում

Աղբյուր ՝ Հարցում ներպետական իրավապահ մարմինների փորձագետների շրջանում (ներկայացված է Հայաստանի կողմից (06.05.2020թ.), Վրաստան (11.05.2020թ.), Մոլդովայի Հանրապետություն (24.04.2020թ.) և Ուկրաինա (08.05.2020թ.)):

Ինչպիսի՞ն է ներգործությունը թմրանյութերի օգտագործման, թմրանյութերի հետ առնչվող վնասների և թմրանյութերի հետ առնչվող առողջապահական ծառայությունների վրա

- Թվում է, թե կանեփի օգտագործման վրա ամենաքիչ ներգործություն է եղել, բայց նկատվում է տարբերություն, զվարճանալու համար կանեփ օգտագործողների և ավելի հաճախակի օգտագործողների շրջանում:
- Որոշ աղբյուրների համաձայն, նվազել է տարածաշրջան ապօրինի ներմուծվող այնպիսի անօրինական նյութերի մատչելիությունը, ինչպիսիք են հերոինը, MDMA, ամֆետամինները և կոկաինն ինչը, ըստ կարծիքների, հանգեցրել է այդ թմրանյութերի օգտագործման նվազմանը, չնայած երբեմն սա դժվար է փաստերով ապացուցել:
- Հնարավոր է, որ հերոինի տեղային անբավարարությունը նպաստած լինի բուժման պահանջարկի ավելացմանը՝ օփիոիդային թմրամոլության փոխարինող բուժման (ՕԹՓԲ) ծառայությունների հասանելիություն ձեռք բերելու փորձերի աճին և, ընդհանուր առմամբ, թմրամոլության դեմ բուժման պահանջարկի նկատված աճին:
- Որոշ անօրինական թմրանյութերի հասանելիության անկումը, կարծես, հանգեցրել է օրինական փոխարինիչների՝ ալկոհոլի, լայնամասշտաբ կիրառման կամ դեղամիջոցների չարաշահմանը,

ներառյալ ՕԹՓԲ դեղամիջոցները կամ այլ հոգեմետ դեղամիջոցները, որոնք հաճախ օգտագործվում են ապօրինի թմրանյութերի հետ միասին:

- Ազգային սահմանափակման միջոցների կիրառման նախնական փուլում, ընդհանուր առմամբ, ավելի քիչ առողջապահական ծառայություններ են մատուցվել, որն ազդել է ԿՈՎԻԴ-19-ի հետ կապ չունեցող առողջապահական ծառայությունների մեծամասնության վրա: Արդյունքում, տպավորություն կա, որ թմրանյութեր օգտագործող անձանց համար թմրանյութերի հետ կապված իրենց սովորական ծառայություններն ավելի քիչ հասանելի են եղել և նրանք ավելի քիչ են օգտվել դրանցից: Որոշ երկրներում թմրամոլության բուժման ծառայությունների, հատկապես՝ ՕԹՓԲ ծառայությունների նոր հաճախորդների մուտքը, ինչպես նաև արյան վարակների թեստավորման ծառայությունների հասանելիությունը նույնպես սահմանափակ են եղել:

- Ասեղների և ներարկիչների մատակարարման գործում ներգրավված թե՛ ազգային առողջապահական ծառայությունները և թե՛ հասարակական կազմակերպությունները (ՀԿ) իրենց ծառայությունների մոդելները փոփոխել են՝ հնարավորության դեպքում մատուցելով հեռակա և շարժական ծառայություններ:

- Տարածաշրջանի երկրների մեծամասնությունն արագորեն որդեգրել են ՕԹՓԲ տուն տանելու գործելակերպեր՝ ապահովելով բուժման շարունակականությունը: Ուկրաինայում նկատվել է մեթադոնի պահանջարկի ավելացում մասնավոր բժիշկների շրջանում Թմրանյութեր օգտագործող մարդկանց պաշտպանները ողջունել են ազգային ծրագրերի նոր գործելակերպերը, չնայած որոշ զեկույցներ առաջարկում են առավել լավ վերահսկել ՕԹՓԲ տուն տարվող չափաբաժինները, ինչպես նաև նկատել են մասնավոր բժիշկների աշխատանքին աջակցելու անհրաժեշտություն:

Ինչպիսի՞ն է ԿՈՎԻԴ-19-ի երկարաժամկետ ազդեցությունը թմրանյութերի շուկաների, թմրանյութերի ծառայությունների և թմրանյութ օգտագործող մարդկանց վրա արևելյան ԵՀՔ տարածաշրջանում

- Սույն հետազոտություն արդունքները և Եվրոպայում կատարված նմանատիպ հետազոտություններն ենթադրում են, որ սահմանների վերաբացումից հետո, անհրաժեշտ է զգոն մնալ հանցագործ ցանցերի գործունեության և տարածման մեթոդների զարգացման ուղղությամբ (մակերևույթային և սև շուկաներ, գաղտնագրված հաղորդակցություն, անձամբ առաքում) առումով (ԹԹՄԵԿ և Եվրոպոլ, 2020 թ.): Դա պետք է արտացոլվի իրավասու մարմինների ռազմավարություններում: Փորձագետներն առաջարկում են ավելի շատ ներդրում կատարել աշխատակազմի վերապատրաստման գործում՝ ապահովելով, որ աշխատակազմը պատրաստ լինի արձագանքելու ցանկացած նոր բիզնես մոդելի զարգացմանը թմրանյութերի շուկայում:

- Թմրանյութերի օգտագործման առնչությամբ պետք է սպասել, թե ինչ երկարաժամկետ ազդեցություն կունենա ԿՈՎԻԴ-19-ը և լոքդաունի միջոցների հետագա մեղմացումը: Իրավիճակը պահանջում է շարունակական մշտադիտարկում՝ հաշվի առնելով տեղեկությունները որոշ թմրանյութերի, օրինակ՝ հերոինի և կոկաինի հասանելիության և օգտագործման նվազման, ինչպես նաև որոշ երկրներում ամֆետամինի տնայնագործ արտադրության սկսման և առավել հասանելի հոգեակտիվ այլ նյութերի օգտագործման աճի մասին:

- Ազգային մարմինները և ծառայություն մատուցողները կարող են դիտարկել նորարար մոտեցումների կիրառումը, ինչպիսիք են օրինակ՝ առցանց խորհրդատվությունները և հոգեբանական աջակցությունը, տանն օգտագործվող ՕԹՓԲ չափաբաժինները և հեռավար ծառայությունները՝ նպատակ հետապնդելով նվազեցնել թմրանյութերին առնչվող վնասը, քանի որ դա առանցքային կարող է լինել թմրանյութերին առնչվող ծառայությունների կարիք ունեցող

անձանց ներգրավելու և պահպանելու համար: Միևնույն ժամանակ, առողջապահական ծառայությունները կարող են շարունակել առերեսվել լրացուցիչ ծանրաբեռնվածություն հաճախորդների և առողջապահության աշխատակիցների անվտանգությունն ապահովելու հարցում մինչև ԿՈՎԻԴ-19-ի արդյունավետ բուժում կամ տվյալ վիրուսի դեմ համապատասխան պատվաստանյութ հայտնաբերվի:

Կովիդ-19-ի մասին ռեսուրսներ

ԹԹՄԵԿ

Թեմատիկ էջեր ԿՈՎԻԴ-19-ի և թմրանյութերի մասին՝ http://www.emcdda.europa.eu/topics/covid-19

Եվրոպա

Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման եվրոպական կենտրոն՝ https://www.ecdc.europa.eu/en/novel-coronavirus-china

Գործողությունների և արձագանքման եվրոպական հանձնաժողովի թիմ՝ https://ec.europa.eu/info/live-work-travel-eu/health/coronavirus-response_en

Գիտությունների մեդիայի եվրոպական հաբ (Եվրոպական պառլամենտ): https://sciencemediahub.eu/

ԱՀԿ Եվրոպա՝ http://www.euro.who.int/en/home

Աշխարհ

Առողջության վերահսկման և կանխարգելման կենտրոններ՝ https://www.cdc.gov/coronavirus/2019-nCoV/index.html and https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/community/homeless-shelters/plan-prepare-respond.html

ԱՀԿ՝ https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019